

# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ԴՐԱՍՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ԿՅԱՆՔԻ ՄԵՎ ԴԱՐՆ ԲՈԼՈՐԱԾ 11 ՏԱՐԵՑՆԵՐԻ

01.10.2014

Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն այսօր հատուկ շնորհավորագրով էլ դրամով պարգևատրեց Գեղարքունիքի մարզի 11 տարեցների, ովքեր բոլորել են իրենց կյանքի մեկ դարը: Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հատուկ ուշադրությանն ու դրամական պարգևին են արժանացել Վարսեր գյուղի բնակիչ, 104 տարեկան Արաքսի Գաբրիելյանը, Դմաշեն գյուղի բնակիչ, 100 տարեկան Նվարդ Ոսկանյանը, Վարդենիս քաղաքի բնակիչ, 101 տարեկան Ծաղիկ Սաֆարյանը, Մաքենիս գյուղի բնակիչ, 100 տարեկան Շողան Մխիթարյանը, Երանոս գյուղի բնակիչներ, 112 տարեկան Դուրմեն Փինայանը և 104 տարեկան Բալասան Սիմոնյանը, Մադինա գյուղի բնակիչ, 104 տարեկան Մանյակ Մարգարյանը, Ջորագյուղ համայնքի բնակիչ, 100 տարեկան Շուշիկ Ավետիսյանը, Զուլաքար գյուղի բնակիչ, 100 տարեկան Խանում Տոնեյանը, Ճամբարակ քաղաքի բնակիչ, 102 տարեկան Վարդանուշ Ոսկանյանը և Դպրաբակ գյուղի բնակիչ, 100 տարեկան Մարգարիտ Տավարաձյանը: Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներն անձամբ են այցելել ուշադրության արժանացած տարեցներին և մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի անունից նրանց հանձնել շնորհավորական բացիկներ ու դրամական պարգև: